№ 214 ՇԱԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23 — 1902 — ՇԱԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28 № 214

ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ». Դամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են թերթանցիւ տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Եկատերինա Պավլօվնա եւ Իվան Բաղդանիչ Ղորղանեանցները ցաւօք սրտի խընդրում են իրանց բոլոր բարեկամներին եւ ծանօթներին չնորհ բերել առաջինի օրերի մօր, իսկ երկրորդի զոքանչի

ԶԱՐՎԱՐԴ ՊԵՏՐՈՍԵԱՆ ԹՕԼԿՕՎՆԻԿԵԱՆԻ

յուղարկաւորութեանը, որ լինելու է այսօր, շաբաթ, սեպտեմբերի 28-ին, ժամը 10-ին, Սերգիեվսկայա փողոց, տուն Ղորղանեանի, № 14, դէպի Մողնու ս. Գէորգ եկեղեցին։ Թաղումը լինելու է Խօջիվանքի գերեզմանատանը։ 1—1

ՄԱՐԻԱՄ ԷՄԵԼԵԱՆՕՎՆԱ ՄԱԿԱՐԵԱՆ

Վախճանվեց ծանր եւ երկարատեւ հիւանդութիւնից յետոյ, որի մասին սրտի ցաւով յայտնում են նրա դուստրները—Եւգենիա Պետրոսեան Շիսեանց, Նունէ Պետրոսեան, Յովհաննէս Յարութիւնեան Հախվէրդեանց եւ հանգուցեալի որդիքը Գրիգոր, Նիկոլայ եւ Ալէքսանդր Պետրոսեան Մակարեանները եւ խնդրում են ծանօթներին ու ազգականներին չնորհ բերել հոգեհանգստին ուրբաթ եւ շաբաթ օրերը՝ երեկոյեան 6½ ժամին։ Յուղարկաւորութիւնը—կիրակի, սեպտեմբերի 29-ին, առաւօտեան ժամի 10-ին, դէպի Վանքի եկեղեցին։ Թաղման կարգը ժամի 12-ին։

2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Սկսվում են պարապմունքները. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Միքայէլ Նալբանդեանի արձանի բացումը. Հայոց ներկայացումները. Նամակ Աչարակից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՂԻԱԳԻՐՆԵՐ —ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Էմիլ Զոլայի գրական գործը.

ՍԿՍՎՈՒՄ ԵՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԸ

Այսօր, շաբաթ, սեպտեմբերի 28-ին, կը սկսէ Թիֆլիսում իր զբաղմունքները այն կոմիտէտը, որը պէտք է քննէ տեղական գիւղատնտեսութեան կարիքները։ Կոմիտէտի պարապմունքներին կը մասնակցեն, բացի պաշտօնական անձերից և զանազան ձեռնհաս հաստատութիւնների ներկայացուցիչներից, նաև մասնաւոր գիւղատնտեսներ։ Կոմիտեի զբաղմունքների ծրագիրը ուղարկված է Բարձրագոյն հաստատված խորհրդակցութեան կողմից և արդէն տպված է մեր լրագրի մէջ։ Կոմիտէտը կարող է այդ ծրագիրը լրացնել նոր հարցերով, որը նա կարևոր կը գտնէ տեղական գիւղատնտեսութեան կարիքները աւելի լիակատար կերպով ներկայացնելու նպատակով։

Առաջին նիստը անշուշտ կը զբաղվի կոմիտէտի պարապմունքների դործը կազմակերպելու հարցով, կը բաժանէ իր անդամների մէջ քննելի խնդիրները և կը նշանակէ ապագայ ժողովների օրերը։

Որքան և մեծ ու բան երևոյթին բաղմակողմանի է ծրագիրը, այնուամենայնիւ նա կովկասի համար թերի է։ Մեր երկրի մէջ զարգացած են գիւղատնտեսութեան այնպիսի ճիւղեր, որոնք գոյութիւն չունեն Ռուսաստանի ներքին նահանգներում, մինչդեռ մեր երկրում նրանք ունեն լուրջ տնտեսական նշանակութիւն։ Օրինակ, Ռուսաստանի ներքին նահանգները ծանօթ չեն բամբակագործութեան, հարաւի բոյսերի և ծառերի մշակութեան և լեռնային տնտեսութեան։

Շատ կարևոր է, որ նահանգական կոմիտէտը կարողանար առանձին հոգածութեամբ և ուշադրութեամբ երևան հանել երկրի այն կարիքները, որոնք ունեն մեր երկրի համար էական նշանակութիւն։ Օրինակ, հաղորդակցութեան ճանապարհների նշանակութիւնը մեր երկրում աւելի կարևոր է, քան Ռուսաստանի տափարակներում, որովհետև մեր երկիրը ունի բազմաթիւ լեռներ և ձորեր, որոնք շատ դժուարացնելով մարդկանց երթևեկութիւնը և ապրանքների տեղափոխութիւնը, արգելք են հանդիսանում արդիւնագործութեան լայն զարգացման համար։ Մի ուրիշ օրինակ։ Հողերի ջրելու հարցը, որ ներքին նահանգներում առանձին կարևորութիւն չունի, Կովկասում ունի դ-ա-և հիմնական նշանակութիւն և պէտք է դառնայ առանձին հոգածութեան առարկայ։

Նահանգական կոմիտէտի պարապմունքները երկար չեն տևելու, ուստի ցանկալի է, որ երկրի կարիքներին լաւ տեղեակ անձինք, եթէ հեղինակաւոր խօսք ունեն ասելու և խորհուրդ ունեն յայտնելու, օգտվէին դէպքից հասցնելու կոմիտէին իրանց մտածողութեան արդիւնքները։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ ԱՐՁԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ

Անցեալ տարի, սեպտեմբերի 23-ին, կիրակի, մենք բացինք Գամառ-Քաթիպայի արձանը։

Այսօր, նոյնպէս սեպտեմբերի 22-ին, կիրակի մենք բանում ենք Միքայէլ Նալբանդեանի արձանը նոյն ս. Խաչ վանքում։

Հրաւէրներ ցրված չեն, ներկայ են մօտաւորապէս 30 մարդ։ Հանդէսը համեստ է։ Օրը զարմանալի օր է, յիշեցնում է իրան Նալբանդեանի ալէկոծ կեանքը։ Ցուրտ, սաստիկ քամին փչում է, ամպում է։ Ամպերը պատառ-պատառ փախչում են երկնքի կամարի վրա եւ սակայն արեգակը առատ թափում է իր փայլը։ Զարմանալի է եւ այն, որ հեռու մեզանից՝ Պարիզում, այսօր թաղում են Էմիլ Զոլային։ Երկուսն էլ յայտնի գրողներ եւ գործիչներ։ Զոլան հարուստ երկրի բաղդաւոր զաւակ եւ Նալբանդեան՝ աղքատ երկրի աղքատ զաւակ։ Երբ Զոլան դուրս է գալիս հայրենիքի դաշտը բարութեան, ճշմարտութեան սերմերը սերմանելու, նա տեսնում է ամեն կողմից սէր, յարգանք, կարեկցութիւն եւ գտնում է լուսաւոր երկրում լուսաւոր ազգի մէջ եւ մեռնում է պաշտված, հասկացված։ Խեղճ Նալբանդեանը գործում է ողջ կեանքը մութի, խաւարի մէջ, մաքառելով մութի, խաւարի հետ եւ մեռնում է չը հասկացված, ատված եւ մոռացված։

Եւ մինչդեռ վանահայր Վահան վարդապետը կարդում է աւետարանը, ես մտաբերում եմ հպարտութեամբ, թէ ինչ է մեզ թողել իբր ժառանգ գիտութիւն։ Ակներեւ եղաւ, որ հասարակական մարմինները անհատների գումարումներ չեն, ինչպէս տերողորմեայի հատիկներ, այլ անհատների զանգուածներ են, ինչպէս քիմիական տարրերի ձուլուածքներ։ Եւ ինչպէս ջրի մէջ թթուածին էլ, ջրածին էլ կորցրել են իրանց յատկանիշները, նոյնպէս էլ անհատները ձուլված են հասարակութեան մէջ։ Տարդը, Սիգելէն եւ շատ ուրիշները ցոյց են տուել այն տարօրինակ փաստը, որ ամենամեծ գիտնականների հաւաքական որոշումները ոչնչով չեն տարբերվում պատահական մարդկանց որոշումներից։ «Որովհետև, ասում է Սիգելէն, այս 20—30 ընտրվի անձերից ամեն մէկը, բացի իր անձնական յատկանիշներից, որոնցով նա տարբերվում է միւսներից, ունեն մի շարք թէ ժառանգական եւ թէ ցեղային յատկութիւններ, որոնք նրան մատեցնում են փողոցային դատարկաշրջիկներին»։

Բօմանիստը գործ ունի ամբոխային բարդ հոգեբանութեան հետ, որի մէջ ձուլվում են եւ համարեա կորչում անհատականները։ Հասարակութեան մէջ ապրող անհատը, որքան էլ բարձր լինէր նրա մտաւոր ու բարոյական մակերեւոյթը, յարմարվում է հասարակութեանը. այս է նմանողութեան մեծ օրէնքը, որը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մասսային հիպնոզ։ Զոլան կրտրուկ կերպով մատնեց նմանողութեան գիտական թէորիան բօմանի մէջ, ցոյց տուեց ամբողջ դասակարգեր, որոնց մէջ թագաւորող կեանքի սկզբունքները կլանում են ամեն դիրքի, ամեն աստիճանի զարգացման տէր անձանց համաւասար ոյժով։

Զարմանալի հետեւողութիւն կար միջավայրի ազդեցութեան սկզբունքի ու անհատական հոգեբանութեան ստեղծման մէջ։ Եւ ճշմարիտ, չէ՞ որ մարդուս անհատականութիւնը պիտի ջնջվէր, անհետանար այն ընդհանուր, ամեն ինչ հպատակեցնող ոյժի առաջ, որը կոչվում է շրջավայր։ Եւ մենք տեսնում ենք Զոլայի վէպերի մէջ ահագին հասարակութիւններ, որոնց մէջ լուսաւորվածն ու անզրագէտը, բարոյականը եւ անբարոյականը, ազնիւը եւ ստոր, ազնիւ մարդն ու որիկան հաւասարաչափ հպատակվում են, թեքվում են հանգամանքների առջեւ։ Դէտերմինիզմ։

—

Սակայն Զոլան բոլորովին չը հարթեց մարդկանց միջի եղած տարբերութիւնները։ Նա հասկացաւ եւ անհատականութեան ոյժը, նա դուրս բերեց մի շարք հերոսական անձնաւորութիւններ, մի լեգիոն գործիչների կեանքի բոլոր ասպարէզների մէջ,—գործիչներ, որոնք իրանց ուղղի զօրութիւնը, անընկճելի կամքի ոյժով, ճշմարտասիրութեամբ ու առաքինութեամբ կամ դժոխային յատկութիւններով բարձրանում են ամբոխից վեր, որին հիպնոսում, չոքեցնում են իրանց առջեւ։

Եթէ նա մեզ տար միայն այս հերոսների պատկերները, առանց կապելու նրանց շրջավայրի ու ժառանգականութեան հետ, այն ժամանակ նրա բօմանների մէջ մենք շատ չէքսպիրեան տիպեր կը գտնէինք. բայց Զոլան բացառիկութեան թշնամի էր եւ այդ չէքսպիրեան տիպերն եւս դուրս են գալիս իբրեւ մարմնացումն պատմական, թէ հասարակական ստիպողական պահանջների։

Վերջին ժամանակներս Լոմբրոզոի եւ առհասարակ իտալական հոգեբանական դպրոցի ուսմունքը ոտ է դրել բօմանի մէջ։ Ինչպէս յայտնի է եւ առաջ եւս նկարագրված են եղած հիւանդական տիպեր (եւ ռուս մեծ վիպասան Դոստոյեվսկին մի փառաւոր տեղ է բռնում այս տեսակի վիպագրողների շարքում), սակայն Զոլան էր, որ ձգտեց աւելի գիտնականօրէն ներկայացնել խնդիրը, այն է հիւանդներին դուրս բերել իբրեւ ծնունդ արտաքին ժառանգականութեան։

Զարմանալի խոր հոգախտական մի էտիւդ է նրա «Գազան մարդիկ» վէպը (La bête humaine)։

Հերոսը, Ժակ Լանտիէ, մի մօլի, մի խելագար՝ Լոմբրոզոի տիպերից, որը ապանելու, արիւն թափելու զարհուրելի կիրքն ունի։ Նա ունի երկու եղբայր,—Կլոդ Լանտիէ, որ խելագարվում է եւ ինքնասպան է դառնում եւ Էտիէն

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԷՄԻԼ ԶՈՂԱՅԻ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸ

(Թռուցիկ հայեացք)

—

Դետերմինիզմի ուսմունքը, որ նատուրալիստական դպրոցի ծուծն ու դուղը դարձաւ, անհրաժեշտաբար պիտի բարձրացնէր միջավայրի նկարագրական մասը։ Եւ բօմանիստը պիտի ամենայն մանրամասնութեամբ չրջանի լուսանկարներ տար մեզ։

Եւ Գոնկուր եղբայրները այս մանրանկարների պաշտողները դարձան, իսկ Զոլան նրանց ուղղակի հաստատեց դաւանանքի, կուլտի աստիճանի։ Նա իր լուսանկարչական ապպարատով մտնում է կեանքի մէջ ու նկարում այն ամենը, ինչ որ աչքի է ընկնում, ինչ որ նրա կարծիքով պիտի ազդէր իր հերոսների մտքերի, կիրքերի ու գործողութիւնների վրա։ Նկարագրութեան այս անյագ ծարաւը այնչափ ստիպողական էր, որ նա այլ եւս կանգ չառաւ ոչ մի տեսարանի առջեւ. ոչ մի դարչելիութիւն, անբարոյականութեան ոչ մի արտայայտութիւն չը զզուեցրեց նրան։ Նա մերկացրեց վատ ու լաւը, գեղեցիկն ու զզուելին, առաքինութիւնն ու անբարոյականութիւնը—ամեն ինչ հաւասար սիրով, հաւասար հանճարով։ Նրա լուսանկարը թափանցեց մի մեծ ազգի սիրտն ու հոգին, նրա նիստ ու կացը, բանալով մեր աչքի առջեւ ժողովրդի իսկական պատկերը իր տառապանքներով ու տանջանքներով, իր զեղխութիւնով ու անառակութիւնով, իր իդէալական ձգտումներով ու ստորացնող անբարոյականութեամբ։ Մենք տեսնում ենք մարդկանց, որոնք լողում են կեանքի ցեխի մէջ առանց նրա գարշահոտութիւնը զգալու, աւելի կեղտոտած, քան վերջին անասունը, աւելի ստորացած ու ընկած, քան անբան էակը!

—

Բոմանը նրա աչքին ոչ դիւրընթեռնելի պատմուածք էր եւ ոչ պակվիր։ Աւելի լուրջ եւ աւելի բարեխիղճ էր նա իր մեծ աշխատութիւնների մէջ։ Բոմանը մի ճոխ գիտական տրակտատ էր հասարակական կեանքի, հասարակական հոգեբանութեան։ Հասարակական ցաւերի ու ախտերի ուսումնասիրութիւն էր նա,—մի վերին աստիճանի դժուար ու բարձր-գիտական գործ, որովհետև գրողից պահանջվում են անհուն տեղեկութիւններ, լուրջ գիտելիքներ գիտութեան ամեն ճիւղերին վերաբերեալ։

Բոմանիստը պիտի հանրագէտ լինի.—այս է Զոլայի սկզբունքը, որին երբէք չը դաւաճանեց։

Եւ նա ուշի ուշով հետեւում էր բնական, բժշկական եւ հասարակական գիտութիւնների զարգացմանը։ Մանաւանդ հետաքրքրում էր նրան մարդագիտութիւնը իր ամբողջութեամբ։ Մեծ Կլոդ-Բերնարը, Մաժանդիի այս հանճարեղ աշակերտը, իր ճոխ զարգացման հասցրեց ֆիզիոլոգիան, եւ փորձնական մեթոդ մտցրեց անհատական կեանքի ուսումնասիրութեան մէջ, այն ինչ միւս կողմից մի շարք ներվախտագէտներ ու հոգեբաններ ուսումնասիրեցին հիւանդ մարդու հոգեբանութիւնը։ Իբրեւ հետեւանք այս լուրջ ուսումնասիրութիւնների՝ երեւան եկան հիպնոսական գիտութիւնները եւ Լոմբրոզոյի դպրոցի ուսմունքը, որով յանցաւորը ժառանգականութեան ու միջավայրի արդիւնք է դառնում եւ յանցագործութիւնը—արատաւորված, վատասերված կազմուածքի ֆունկցիա։

Նա լաւ էր հասկանում, որ գիտութիւնով զինված միայն հնարաւոր է ուսումնասիրել թէ անհատի եւ թէ հասարակական օրգանիզմը։ Հնացած էր հասարակական մարմնի այն ըմբռնողութիւնը, թէ նա անհատների մի ժողովածու է։ Անհատների յատկանիշները գումարվում էին, ըստ հին հասկացողութեան, եւ կազմում էին մի հասարակութեան ֆիզիկական ու մտաւոր կեանքը։

Մի խոշոր սխալ էր այս ըմբռնողութիւնը։ Հասարակագիտութիւնը զովեց, անջատվեց միւս գիտութիւններից եւ սկսեց մշակվել, իբրեւ մի անկախ գիտութիւն։ Ակներեւ եղաւ, որ հասարակական մարմինները անհատների գումարումներ չեն, ինչպէս տերողորմեայի հատիկներ, այլ անհատների զանգուածներ են, ինչպէս քիմիական տարրերի ձուլուածքներ։ Եւ ինչպէս ջրի մէջ թթուածին էլ, ջրածին էլ կորցրել են իրանց յատկանիշները, նոյնպէս էլ անհատները ձուլված են հասարակութեան մէջ։ Տարդը, Սիգելէն եւ շատ ուրիշները ցոյց են տուել այն տարօրինակ փաստը, որ ամենամեծ գիտնականների հաւաքական որոշումները ոչնչով չեն տարբերվում պատահական մարդկանց որոշումներից։ «Որովհետև, ասում է Սիգելէն, այս 20—30 ընտրվի անձերից ամեն մէկը, բացի իր անձնական յատկանիշներից, որոնցով նա տարբերվում է միւսներից, ունեն մի շարք թէ ժառանգական եւ թէ ցեղային յատկութիւններ, որոնք նրան մատեցնում են փողոցային դատարկաշրջիկներին»։

Բոմանիստը գործ ունի ամբոխային բարդ հոգեբանութեան հետ, որի մէջ ձուլվում են եւ համարեա կորչում անհատականները։ Հասարակութեան մէջ ապրող անհատը, որքան էլ բարձր լինէր նրա մտաւոր ու բարոյական մակերեւոյթը, յարմարվում է հասարակութեանը. այս է նմանողութեան մեծ օրէնքը, որը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մասսային հիպնոզ։ Զոլան կրտրուկ կերպով մատնեց նմանողութեան գիտական թէորիան բօմանի մէջ, ցոյց տուեց ամբողջ դասակարգեր, որոնց մէջ թագաւորող կեանքի սկզբունքները կլանում են ամեն դիրքի, ամեն աստիճանի զարգացման տէր անձանց համաւասար ոյժով։

Զարմանալի հետեւողութիւն կար միջավայրի ազդեցութեան սկզբունքի ու անհատական հոգեբանութեան ստեղծման մէջ։ Եւ ճշմարիտ, չէ՞ որ մարդուս անհատականութիւնը պիտի ջնջվէր, անհետանար այն ընդհանուր, ամեն ինչ հպատակեցնող ոյժի առաջ, որը կոչվում է շրջավայր։ Եւ մենք տեսնում ենք Զոլայի վէպերի մէջ ահագին հասարակութիւններ, որոնց մէջ լուսաւորվածն ու անզրագէտը, բարոյականը

ռանդութիւն 35 տարեկան Միքայէլ Նալբանդեանը եւ ինչ թողել է Ֆրանսիային մօտ 60 տարեկան հասակին հասած Զօլան։

1866-ին նա մեռաւ։ 36 տարուց յետոյ նա վերջապէս ունի իր արձանը, որը լաւ տպաւորութիւն է թողնում եւ պատիւ բերում մեր երիտասարդ քանդակագործ Անդրէաս Տէր-Մարուքեանի տաղանդին եւ ճաշակին։

Մոխրագոյն հատաքարից տաշած է գեղեցիկ կիսաբոլորակ fantaisie, որը իջնում է երկու կիսաբոլորակ աստիճաններով. հատաքարի միջից սկսվում է սիւն, որի վրա արդէն բարձրանում է մարմարեայ սիւն. վերջինիս վրա ամրացած է դափնեայ ճիւղ արոյրից շինած։ Սիւնը վերջանում է կիսարձանով եւ ունի իր վրա գրած հետեւեալ խօսքերը՝ Միքայէլ Նալբանդեան. М. Л. Налбандіану. 27 X 1830—30 III 1866։

Կիսարձանը պատկերացնում է մեզ 25 տարեկան երիտասարդ Միքայէլին եւ առնված է նրա 1856 թուականի պատկերից, որը գտնվում է Գր. Սալթըքեանի մօտ. նմանութիւնը աչքի է ընկնում։ Ձեր առաջին մի եւրոպացի է եւ դա բնորոշ է, որովհետեւ նա ողջ իր կեանքը մեզ՝ ասիացիներիս եւրոպականութիւն էր քարոզում։

Այժմ ս. Խաչ վանքում կողք կողքի են կանգնած Ռափայէլ Պատկանեանը եւ Միքայէլ Նալբանդեանը։

Մենք բացինք երկուսի արձաններն էլ *)։

Նրանց երկուսի երկերի լոյս ընծայելու հարցը որոշել է արդէն Նոր-Նախիջեւանի Հայոց Բարեգործական ընկերութիւնը, որը հաւաքում է նիւթեր։

Բաւականանանք։

Բաւականանանք արդեօք կանգնելով արձաններ եւ հրատարակելով նրանց երկերը։

Ես կասեմ՝ ոչ։

Փոքր եւ խեղճ չը մնալու համար պէտք է միշտ յիշել, սիրել, յարգել մեծերին։

Եւ մենք կը ցանկանայինք մի կենդանի արձանով անմահացնել այդ սիրելի անունները։

Ամենագեղեցիկ կենդանի արձանը կը լինի հեռու Պարսկաստանի խուլ անկիւններից մէկում մի դպրոց, տարրական կամ միջնակարգ, դա կախված կը լինի գումարից, այո, մի դրպ-

*) Լուսանկարին տանալու ևս ունենք փող. հաշիւը կը պատրաստենք ժամանակին եւ կուղարկենք մեր բոլոր խմբագրատները։

ռոց բանալ յիշատակ Ռափայէլ Պատկանեանի եւ Միքայէլ Նալբանդեանի յիշատակին։

Ահա մեր պարտքը։ Երազ է նա դեռ։ Բայց որչափ սիրելի կը լինէր մեզ համար այդ երազը իրագործել եւ այդ մեծ պարտքը կատարել...

Գր. Զալխուշեան

ՀԱՅՈՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ

Հինգշաբթի, սեպտեմբերի 26-ին, հայոց դրամատիական ընկերութեան խումբը տուաց չորրորդ ներկայացումը։

Այս անգամ հասարակութիւնը չէր բացակայում, թէեւ օթեակները շարունակում էին մնալ փոստատարպէս դատարկ. Սօլոլակը յամառութեամբ պնդում է իր որոշման վրա՝ չայցելել հայոց թատրոնը։ Նրա այդ յամառութիւնը շատերը տրամադիր են բացատրելու նրանով, որ հայ բուրժուազիան չէ այցելում հայոց թատրոնը այն պատճառով, որ գեղարուեստական զուարճութիւն չէ կարող գտնել այնտեղ, ունենալով բաւական զարգացած գեղարուեստական ճաշակ։ Եթէ այդ է նրա անտարբերութեան պատճառը, պէտք է ասենք, որ այդ օրվայ ներկայացումից յետոյ, երբ հայ դերասանական խումբը ցոյց տուաց, որ նա էլ ընդունակ է տալ հասարակութեան գեղարուեստական զուարճութիւն, այդ տարակուսութիւնը պէտք է չքանայ այսուհետեւ։

Եւ ճշմարիտ, հինգշաբթի օրվայ ներկայացումը բոլորովին զոհացրեց մեզ. մենք, մեզ հետ կարծում ենք եւ հասարակութիւնը ստացանք հոգեկան բաւարարութիւն եւ ամեն հանդիսական կարող էր ասել, որ զուր տեղ չը տուաց այդ օր իր դրամը։

Խումբը ներկայացրեց երիտասարդ ռուս նոր հեղինակ Նայդենովի «Վանիչինի Զաւակները» դրամատ., թարգմանութիւն Ց. Արէլեանի, որ առաջին անգամն է տրվում Թիֆլիսի բեմի վրա։ Այդ դրամատ. ահագին սենսացիա առաջ բերեց, երբ առաջին անգամ ներկայացրվեց Մոսկվայի Կօրշի թատրոնում, ուր այժմ եւս շարունակում են խաղալ։ Սենսացիայի պատճառն այն բարոյական խոր միտքը կամ մօտալն է, որ դրված է այդ պիեսայի մէջ։ Հեղինակը կամեցել է ցոյց տալ հասարակութեան այն փչացած, հակաբնական դաստիարակութեան աղէտալի հետեւանքները, որ բուրժուա-վաճառականական դասակարգը տալիս է իր զաւակներին։ Ահա ձեզ մի ամբողջ, մեծ ընտանիք, բաղկացած հօրից, մօրից եւ վեց զաւակներից. հայրը, ծերունի վաճառական Վանիչինը, հին գաղափարների տէր մարդ, ամբողջ 40 տարի տքնել, աշխատել է, փող հաւաքել իր զաւակների համար, որոնց նա սիրում է, սիրում է խորապէս, իբրեւ հին մարդ, բայց ցոյց չէ տալիս, որ սիրում է, այլ, ընդհակառակը, միշտ խստութեամբ է վարվում նրանց հետ։ Հակառակ իր գաղափարների, նա մինչեւ անգամ ուզում է տալիս իր զաւակներին, բայց նա շարունակ այն կարծիքի է, որ տալով իր զաւակներին ուզում, այսինքն գիմնազիա ուղարկելով, նրանց ապրեցնելով, նա դրանով կատարում է իր բոլոր պարտաւորութիւնները. նա ամենեւին չէ հետաքրքրվում, թէ ինչպէս են մեծանում այդ զաւակները, ինչպէս են դաստիարակվում, ում ընկերութեան մէջ են մեծանում։ Ամբողջ դաստիարակութիւնը պատում է փողի շուրջը։ Այդպիսի դաստիարակութիւնից կարող են դուրս գալ միայն փչացած մարդիկ, բարոյական հրէշներ։ Եւ, ի հարկէ, դուրս են գալիս, ու վերջ ի վերջոյ ինքը Վանիչինը համոզվում է այդ բանի մէջ, բայց չիմանալով պատճառները, հարցնում է. «օրտեղից են սրանք, օրտեղից դուրս եկան, ինչու այսպէս դուրս եկան»։ Այդ հարցերը նրան հասցնում են գրեթէ խելագարութեան եւ ապա ինքնասպանութեան։

Վանիչինի դերը կատարում էր պ. Պետրոսեանը. աւելի մեծ հմտութիւն անկարելի էր պահանջել դերասանից. նա սկզբից մինչեւ վերջը շատ գեղեցիկ տարաւ իր խաղը եւ մենք կասենք, որ նա, արդարեւ, տուաց մի ամբողջացրած տիպ։ Շատ մեծ գոհացումն պատճառեց մեզ եւ երիտասարդ Մամիկոնեանը, որ կատարում էր գիմնազիստ Ալեքսայի դերը եւ ցոյց տուաց, որ նրանից կարող է շատ լաւ դերասան դուրս գալ ապագայում, եթէ նա շարունակ մշակէ իր ձիրքերը եւ, անկասկած, նա ձիրք ունի։ Երրորդ տեսարանում, երբ Ալեքսան արդէն սիրտը բաց էր անում հօր առաջ եւ սա, վերջապէս, հասկացաւ, թէ ինչու այդպիսի զաւակներ են դուրս եկել պէտք է ասենք, որ Պետրոսեան եւ Մամիկոնեան իրանց բնական եւ սրտաշարժ խաղով խոր տպաւորութիւն գործեցին եւ նոյն իսկ արտասուք առաջ բերին շատերի աչքերի մէջ։

Դերով Արէլեանին, որ կատարում էր Կոնստանտինի՝ աւագ որդու դերը, պէտք է ասենք, որ Արէլեան չը կարողացաւ տիպ ստեղծել իր դերից, ինչպէս այդ արաւ Պետրոսեանը. մենք վերագրում ենք այդ այն հանգամանքին, որ Կոնստանտինի տիպը շատ էլ որոշ տիպերից չէ։ Պէտք է յիշենք եւ օր. Խիթարեանին, որ չնորհալի կերպով կատարեց իր փոքրիկ դերը։ Առհասարակ ներկայացումը իր ամբողջով շատ աջող էր եւ մենք խորհուրդ կը տանք դրամատիական ընկերութեան վարչութեան կրկնել տալ Նայդենովի պիէսան։

Հ. Ա.

ՆԱՄԱԿ ԱՇՏԱՐԱԿԻՑ

Սեպտեմբերի 23-ին

Անցեալ կիրակի, սեպտեմբերի 15-ին, Երեւանեան նահանգի ուսումնարանների տեսուչ Զիչինաձէի, Վաղարշապատի եւ Աշտարակի ատիկանական պրիստաւների, տեղիս հոգեւորականների, ուսուցիչների եւ խուռն բազմութեան ներկայութեամբ վերաբացվեց կովկասեան հոգաբարձուի իրաւասութեան ներքոյ տեղիս ս. Աստուածածին եկեղեցու բացում գտնված նախկին եկեղեցական-ծխական երկսեռ դպրոցը։

Հոգեւորական դասը նոյն օրը ուսումնարանի ընդարձակ դահլիճում կատարեց օրհնութեան մաղթանք։

Այս նոր շինութիւնը օրհնելուց վերջը պարոն տեսուչը դիմեց հասարակութեան՝ շնորհաւորելով դպրոցի բացվելը, մի քանի խօսքով բացատրեց կառավարութեան գործ դրած ջանքերը ժողովրդին կրթելու համար։ Ասաց, որ տարեկան գանձարանից 28,000 ր. է ծախսվում իր մասի նոր բացված դպրոցների վրա, որոնք, բացի եօթից, բոլորն էլ հայ գիւղերում են բացվել։

Խօսեց եւ նոր ուսուցիչ Ս. Տէր-Վարդանեան հայերէն։ Ամփոփ կերպով պատմեց գիտութեան կարեւորութեան եւ օգուտների մասին, բացատրեց այժմեան կեանքի անհրաժեշտ ծանր պայմանները։

Հիւրերի համար ճաշ էր պատրաստված պրիստաւի տանը հասարակութեան հաշւով։ Ճաշի ժամանակ հեռադրում են հասարակութեան կողմից կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուին եւ նահանգապետին իրանց ուրախութիւնն ու չնորհակալութիւնը դպրոցի բացման առիթով։ Հեռագրում է եւ տեսուչն իր կողմից Գօրու ուսուցչական սեմինարիայի տեսչին՝ նորից ընդունելու աշուրակեցի մի որբ

Լանտիէ, որ դառնում է անարխիստ։ Նա ունի մի քոյր էլ, Նանա, որ պոռնիկ է։ Ահա մի հիւանդ, վատասերված սերունդ. օրտեղից եկան սրանք։

Նրանց նախամայրը Աղէլայիդ Ֆուքն է, որը գժատանն է մեռնում, իսկ մայրը մի աղբեցող ու մի անբարոյական կին է։

Ահա իսկական էդիւա. պէտք է կարդալ «Մուգոն-Մակկարների» ամբողջ սերիան, բոլոր 20 հատորները, որպէս զի մարդ գաղափար կազմէ այն անհուն ճշմարտութեան մասին, որը հաղածում է Զօլային մինչեւ մանրամասնութիւնները։

Այս թռուցիկ հայեացքի մէջ մենք անկարող ենք թուելու անգամ այն անհամար հասարակական եւ սոսկ փիլիսոփայական խնդիրները, որ մեծ բոմանիստը շօշափել է իր 40 հատոր գրքերի մէջ։ Կարելի է վստահօրէն ասել, որ նա չը թողեց ոչ մի հասարակական խոց, որ չը նկարագրէ իր ապշեցնելու չափ զօրեղ գրչով։

Զօլան, նատուրալիստ լինելով, չը դադարեց սակայն նաեւ փիլիսոփայ լինել։ Մի ուրիշ շարք գրքերում նա շօշափել էր արդէն մի շարք խոր փիլիսոփայական-գործնական խնդիրներ, եւ դեռ շատ բաներ էլ էր մնացել նրան անելու մարդկութեան համար, երբ դաժան մահը մէկ գիշեր խեղդեց նրան, երբ նոր վերադարձած իր սիրած Պարիզը, նա պատրաստվում էր ամարանոցում վաստակած ոյժով շարունակելու իր մեծ գործը...

Ամբողջ քաղաքակիրթ մարդկութեան հետ մենք եւս խորապէս խոցված ենք այս անդառնալի եւ ծանր կորստից։ Զօլայի անձնաւորութիւնն այնչափ մեծ է, որ ընկճում է մեր մէջ նրան գնահատելու վստահութիւնը։

Անտարակոյս նրա շատ թէօրիաներն ու հայեացքները վիճելի կարող են լինել։ Անչուշտ չափազանցրած է շրջավայրի ազդեցութեան չափը, անշուշտ նրա ժառանգականութեան թէօրիաներն էլ դեռ ապացուցված ու պարզված չեն գիտութեան կողմից,—սակայն մենք խոնարհվում ենք այս հանճարի առաջ, որ իր թռիչքը չէ սահմանափակում գիտութեան նեղ շրջանակով, եւ որը անվախ դիմում է դէպի լոյս, դէպի ճշմարտութիւն, ինչպէս ծաղիկը դէպի արեւ։ Խրատաւու եւ օրինակելի է «Մուգոն-Մակկարների» մեծ հեղինակի գործը։

Ճշմարտասիրութիւն եւ աշխատութիւն էր որոնում այս աշխարհի վրա, եւ իբրեւ մարմնացած օրինակ, նա ինքը մնաց ճշմարտասէր եւ արդարադատ, թէ իր վէպերի մէջ եւ թէ հասարակական կեանքում։

Իսկ ճշմարիտ եւ անաչառ լինելու համար, վիպասանը պիտի բարեխղճաբար եւ գիտնականօրէն ուսումնասիրած լինի այն խնդիրը, որը նա շօշափում է իր գրուածքի մէջ։ Զօլան կլանում էր այն ամենը, ինչ կապ ունէր իր վէպերի հետ։ Ածխահանների կեանքը ուսումնասիրելու համար նա ապրում էր հորերում եւ ուսումնասիրում էր ածխահանութիւնը ֆինանսական, տեխնիկական եւ այլ տեսակէտներից։ Իր «Երեք քաղաքներ» վէպերը գրելու համար նա գնում Լուրդ, գնում է Հռոմ, ուսումնասիրում է կաթոլիկութիւնը, իբրեւ ծիսական եկեղեցի։ «Բեղմնաւորութիւնը» հեղինակելու համար նրան հարկաւորվում է բժշկական գիտութիւնը, նա մտնում է կանանց հիւանդութիւնների կլինիկաներ, ակնատես է լինում մեծ օպերացիաների... Ընդունված է, որ մի գրողի գործերը քննելիս յայտնեն՝ յոռետես էր նա, թէ լաւատես։

Զօլան միշտ աշխատել է անդէմ լինել իր վէպերի մէջ, այսինքն զսպել, թագցնել իր սեփական համակրանքն ու հակակրանքը. այնուամենայնիւ շատ հեղինակաւոր քննադատներ նրան պեսսիմիստ են համարում։ Բրունետիերը, նատուրալիզմի այս անհաչտ թշնամին, այս կարծիքին է։ Մեզ թւում է սակայն, որ Զօլայի յոռետեսութիւնը միայն ժամանակաւոր է եղել եւ ամփոփում է նրա գործունէութեան մի որոշ շրջան միայն։ Վերջին գրուածքների մէջ նա, ընդհակառակն, հանդիսանում է իբրեւ մի համոզված լաւատես։

Քողարկած անելով ֆրանսիական բուրժուայի նեխած օրգանիզմը, արիստոկրատիայի վատասերումն եւ ժողովրդի բարոյական ապականութիւնը, նա մի եւ նոյն ժամանակ յառած ունի իր հայեացքը հորիզոնին, որտեղից պիտի ծագէ ճշմարտութեան եւ արդարութեան արեւը։ Նա հաւատում է իր մեծ ազգի վերածնութեանը, մեծ իրարանցումների փլատակներից յետոյ։ Իր «Արշալոյս» վէպի մէջ, որի մէջ նկարագրված է ածխահան բանուորների ողորմելի, բայց մինչեւ ոսկրի ծուծը փչացած ու ընկած դասակարգը, որ փտում էր անառակութեան մէջ, հեղինակը չէ յուսահատվում, այլ լսելի է անում «հողի խորքերից նոր աշխարհի «ծննդեան աւետիսը»։ Նոյն ենք տեսնում նրա «Հող» եւ «Պարիզ» հրաշալի վէպերում։

Շատ բնորոշ է այդ կողմից նրա «Բեղմնաւորութիւն» վէպը, որի մէջ հեղինակը ուսումնասիրում է Ֆրանսիայի ազգաբնակութեան նուազման հրատապ խնդիրը։ Հեղինակը չէ յուսահատվում, նա հաւատում է, որ մի օր կը վերածնվի Ֆրանսիան եւ հակառակ Մալտուսի օրէնքին, ծայրահեղ բեղմնաւորութեամբ կը լցնէ երկիրը նորանոր սերունդներով։

Բայց ինչ ձեւով պիտի տապալվի հինը, յեղափոխվի ներկան։ Այդ հարցին նա պատասխանում է իր «Երեք քաղաք» բոմաններում։ Գիւյոմը սկզբում մի անարխիստ էր եւ, իբրեւ քիմիկոս, նա պատրաստվում է մի ահագին տաճար օդը թնդեցնել, երբ նրա մէջ տասնեակ հազարներով մարդիկ կը լինեն հաւաքված, բայց յետոյ փոխում է իր հայեացքները։ Ո՛չ, ռումբի ու աւերման միջոցով չը պէտք է վերածնվի մարդկութիւնը, ո՛չ, զոհերը չեն կարող երջանկացնել աշխարհը, երբէք անարդարութիւնը չէ կարողացել երջանկութիւն ստեղծել երկրիս երեսին,—գիտութեան զօրութիւնով եւ ոչ թէ ռումբերի միջոցով պէտք է յեղափոխվի աշխարհը, ասում է Գիւյոմի բարեկամ Բերարանը։ Գիտութիւնն է, որ արհամարհելով դասակարգերի ողորմելի կռիւները, ճշմարտութեան, արդարադատութեան ու խաղաղութեան դար է պատրաստում մարդկութեան համար։ Գիտութիւն եւ աշխատանք,—ահա այն երկու լծակները, որոնք պէտք է յեղաշրջվեն տիրապետող կարգերը։

Մենք կանգ ենք առնում. անկարելի է մի լրագրական յօդուածի մէջ նոյն իսկ հարեւանցօրէն ուրուագծել այնպիսի մի խոշոր անձնաւորութեան դէմքը, ինչպէս էր մեծ ֆրանսիական բոմանիստը։

Աշխատութիւն եւ բարեխղճութիւն աշխատանքի մէջ, ահա նրա նշանաբանը. գիտական բոման գրելով, նա այնուամենայնիւ չէչ, սահմանափակվում սոսկ գիտութեան նախագծած ասպարէզի մէջ. նրա մտքի զօրեղ թռիչքը համարեա միշտ անցնում է գիտութեան գծած սահմանները եւ իր անկախ ընթացքում աւելի հեռու է գնում, քան գիտութիւնը։ Բայց հրաշալի է այս չափազանցումն, որովհետեւ նա ուժեղութեան արտայայտութիւն է, նա մտքի լայնութեան եւ գիտական պաշարի վրա ունեցած վստահութեան գործ է։ Զօլան իր գործունէութեան հէնց սկզբից գրաւեց նմանողների, աշակերտների մի լեգիոն։ Սակայն շուտով սրանցից մի քանիսը (եւ խոշորները) վախեցան ուսուցչի արած անսանձ մերկացումներից, նրա նկարագրական մոլութիւնից, որոնց մէջ նա անկեղծ էր, ինչպէս ամեն բանում, եւ հեռացան նրանից։ Զօլայի դրօշակը ծանր էր այս վախկոտների ուսերին, նրանք փախան, երկնչելով, թէ մի գուցէ այն ցեխը, որը կեղծ բարոյագէտները եւ կեղծ ամօթխածները շպրտում էին մեծ վիպասանին, նրանց էլ կը դիպչի։ Մի դրօշակ եւ այն էլ այդպիսի սպառնացող ու յեղափոխիչ դրօշակ, անսասան պահելու համար, հարկաւոր է նոյնպէս անսասան կամքի ոյժ, համոզմունք, որ իր ուղղութիւնը ճշմարիտ է։ Զարմանալի չէ ուրեմն, որ Զօլան աշակերտներ չը թողեց։ Հետեւողների լեգիոնը, ցրիւ եկաւ, ամեն մէկը փախցնելով իր հետ անզուգական վիպասանի քարոզած գաղափարներից մի քանիսը եւ նատուրալիզմի այս բեկորների վրա հիմնելով իր փառքը։ Զօլայական նատուրալիզմը իր ամբողջութեամբ գուցէ թաղվեց իր մեծ հեղինակի հետ...

Վ. Արծրունի

տղայի, որին ընդունած եւ ապա արձակած են լինում նոյն սեմինարիայից ուսման եւ տարուայի փող չունենալու համար։ Ճաշին ներկայ եղողներից հանգանակում են մօտ 70 ռուբլի նոյն տղայի օգտին եւ խոստանում են ամբողջ ծախքը հաւաքել գիւղից։

Պէտք է յիշել, որ Աշտարակը պարտաւորված տարեկան պէտք է տայ ուսումնարանին նպաստ 400 ռուբլի, դպրոցի վերանորոգութեան ծախքը. միմիայն այս տարվայ վերանորոգութեան համար փող դուրս եկաւ գիւղից 800 ռուբլի, որովհետեւ, փակվելով 96-ին, թողած էր շինութիւնը անխնամ ու անպահապան, որի պատճառով եւ այդքան ծախք եղաւ։ Նշանակված է ուսման վճար հնգական ռուբլի, ձրիավարժ հաշուած է 10 տոկոս, որ համեմատած սովորող չքաւորների, աղքատների եւ տեղացիների քաշած ծախքերի հետ, շատ եւ շատ քիչ է։ Մեր կարծիքով ամենաքիչը 25 տոկոսը պէտք է ազատել ուսման վճարից։

Տրված էր 185 խնդիր երկու սեռից։ Ընդունվեց 120 աշակերտ-աշակերտուհի, որոնցից 78-ը տղայ, 42-ը աղջիկ։ 65 հոգի դուրս մնացին, բայց դեռ քանի-քանիսն են մնացել խնդիր չը տուած։ 700 տանից ուել ունեցող գիւղից սովորում են երկու դպրոցներում 255 աշակերտ, եւ միայն 42 աշակերտուհի։

Վաղ. Նահապետեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Բերլին, սեպտեմբերի 25-ին

Կարդալով «Մշակի» 151 համարում իմ դէմ ուղղած մի «թղթակցութիւն» Բերլինից Ե. Թ. ստորագրութեամբ, լի զրպարտութիւններով, յանուն ճշմարտութեան պատիւ ունեմ խնդրելու՝ «Մշակի» առաջիկայ համարներից մէկում տեղ տալ այս պատասխանս, որ ինձանից անկախ պատճառներով մի փոքր ուշ է հասնում ի գիտութիւն հայ հասարակութեան։

Օգուտածագիրը՝ Եղիշէ Թոփչեան՝ անկասկած ազգային ծառայութիւն է համարել «Մշակի» վերոյիշեալ համարում հայ հասարակութեան աչքն բաց անել իր սրտի վշտերը. օրօրված իր քաջութիւնից, նա միանգամայն մոռացել է հարց տալ, թէ ում է հետաքրքիր իմանալ, որ Ե. Թոփչեան շատ անքուն գիշերներ է անցկացրել Բերլինում, որ նրան պ. Խալաթեանցի «պրոֆէյն» էլ, ցիլինդրն էլ, ձեռափայտն էլ անգամ հանգիստ չեն տուել, ուր մնաց «դասախօսութիւն» բառը։

Նախ եւ առաջ նա զայրացած է, որ գերմանական համալսարանը՝ «դօկտոր» տիտղոսը տալով առհասարակ համալսարանականներին՝ նրա բարեհաճութիւնը չէ հարցնում. (Ռուսաստանում պետական քննութիւն տուողները ստանում են «դօկտորութիւնից» աւելի բարձր գիտական աստիճան)։

Քաջ յօդուածագիրը չէ պատկառում իր բամբասանքների հետ խառնել այնպիսի յարգելի գիտնականների անուններ, որոնց գործունէութիւնն ըստ արժանաւորութեան գնահատելու եռ ինձ յատկանշն դէպ աւելի իրաւունք կը համարեմ, քան Թոփչեան, որ մի տող անգամ նրանց աշխատասիրութիւններից կարդացած չէ։

Ե. Թոփչեան, բնաւ ծանօթ չը լինելով հայ գիտութեան ներկայ ընթացքի հետ, սակայն զարմանալի վստահութեամբ յանդգնում է իր դատավճիռը սրա նրա գլխին կարդալ։

Տգեղ ծառայութիւն է արել Ե. Թոփչեան պրոֆ. Լէմանին. եթէ անգամ նրա հաղորդած տեղեկութիւնը ճիշդ լինէր (թէ պ. ուսուցչապետը միայն մէկի պատճառով չէ կամեցել ներկայ գտնվել հայկական երեկոյթին), պ. գիտնականի վարմունքը հազիւ թէ պատուաբեր նրան։ (Փակագծում կը նկատենք, որ պրոֆ. Լէման հայագէտ չէ)։

Նոյնը եւ «Շիլլեր» թատրոնի դիրեկտորի նկատմամբ, որի դուռը բաց է իր բարեկամների եւ այցելուների համար, լինեն սրանք ցիլինդրով եւ կամ առանց ցիլինդրի։ Թոփչեանների հաճոյքը այստեղ միանգամայն աւելորդ է։

Մենք պահանջում ենք Ե. Թոփչեանից ազնուութիւն ունենալ խոստովանելու, որ հրապարակական դասախօսութիւններս կարդացած եմ ըստ հրաւէրի տեղիս Rund Deutscher Bodenreformer ընկերութեան եւ թէ ինքն պ. նախագահը վերջին նիստում պաշտօնապէս խնդրեց «Հայոց նոր գրականութեան» մասին դասախօսութիւնս թոյլ տալ տպելու ընկերութեան Deutsche Volksstimme ամսաթերթում. ուստի այստեղ մի խօսք անգամ չէ կարող լինել «ճանձրացնելու» մասին։

Ճանձրացնողը ինքն Ե. Թոփչեանն է իր մանրակրկիտ զրպարտութիւններով, որին մենք ամենայն իրաւամբ վերադարձնում ենք «հաստատութեան» խրատները։ Պ. «Թղթակիցը», իր մարգարիտները չարելիս, ընաւ չէ զգացել, որ իր կրքերի կեղտը ինքն իր գլխին է թափել։

Իսկ Բ. Խալաթեանց, գինված խաղաղութեամբ, կը շարունակէ աշխատել իր ազգի համար այնչափ, որչափ կը ներեն նրա ոյժերը, իր սառը արհամարանքը դրոշմելով Եղիշէ Թոփչեանի նման դատարկախօսների ճակատին։

Բագրատ Խալաթեանց

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ հաղորդում են, որ հայոց դրամատիկական ընկերութեան վարչութիւնը որոշել է հոկտեմբերի 7-ի ներկայացումից սկսած աբօնրմենտ բանալ օթեակների համար։

—

Մտադրութիւն կայ պարտաւորեցնել բոլոր քաղաքային հիւանդանոցների վարչութիւններին ղահեկանը գանգատի գրքեր, որոնց մէջ հիւանդները եւ այցելուները հնարաւորութիւն ունենան գրելու իրանց գանգատները եւ պահանջները։

—

«Մշակի» № 212-ում մենք զետեղել էինք մի թղթակցութիւն Երեւանի քաղաքային ընտրութիւնների մասին։ Վերցնելով մեր թղթակցութիւնից մի քանի տեղեկութիւններ, «Тифлискій Листокъ» լրագիրը իր երէկվայ համարում սխալմամբ հաղորդել էր, որ Երեւանի ներկայ քաղաքագլուխը իբր թէ սեւացել է ձայնաւորական ընտրութիւնների ժամանակ։ Ուղղելով լրագրի այդ սխալը, մենք մի եւ նոյն ժամանակ կարող ենք ասել եւ այն, որ հաստատ աղբիւրներից տեղեկութիւն ունենք, որ Երեւանի քաղաքագլուխ Իսահակ Մելիք-Սղամալեան իր անունը չէ դրել ընտրողական տուփերի վրա եւ ուրեմն չէր կարող սեւ կամ սպիտակ քուէներ ստանալ։

—

«Рус. Вѣд.» լրագիրը հաղորդում է, թէ կոմս Լ. Ն. Տոլստոյի առողջական դրութիւնը այնքան բարւոքվել է այժմ, որ նորերումս «Եասնայա Պոլեանայում» կայացած բժիշկների խորհրդակցութիւնը անհրաժեշտ չը համարեց այս տարի եւս ուղարկել կոմսին Կրիմ, այլ որոշեց խորհուրդ տալ Տոլստոյին՝ առաջիկայ ձմեռվան ընթացքում, իր կալուածքում մնալիս, պահպանել կատարեալ հանգստութիւն եւ ձեռք առնել բոլոր հնարաւոր միջոցները՝ օդի փոփոխականութեան եւ ցրտերի վնասակար ազդեցութիւնից պաշտպանվելու համար։

—

Սեպտեմբերի 25-ին տեղի ունեցաւ Թիֆլիսի քաղաքային վարչութեան մէջ կազմված առանձին մասնաժողովի նիստը՝ քննելու ինժենէր Խատիսեանի եւ Բրայլովսկու տուաջարկութիւնը, որով նրանք արտօնութիւն են խնդրում ածնէլ փորելու Սօլօլակի սարի միջով՝ առանց առ այժմ շօշափելու այն հարցը, թէ ինչ աղբեցութիւն կարող է ունենալ տօնելը Թիֆլիսի հանքային ջրերի աղբիւրների վրա։ Մասնաժողովը սկզբունքով հնարաւոր համարեց տալ Խատիսեանին եւ Բրայլովսկուն խնդրված արտօնութիւնը 40 տարի ժամանակով եւ այն պայմանով, որ քաղաքը իրաւունք ունենայ ցանկացած ժամանակ յետ գնելու այդ ձեռնարկութիւնը։

—

Թիֆլիսի նահանգապետը դիմեց կովկասեան կառավարչապետի գիւանատան տեխնիկական բաժանմունքին եւ խնդրեց այդ բաժանմունքի տեխնիկներից մէկին նշանակել որպէս անդամ այն մասնաժողովի, որ կազմված է Վէյդէնբաումից, Անտոնովից, Լուցկուց եւ Քալանթարից եւ որ մօտ օրերումս պէտք է ուղեւորվի Ախալքալաքի գաւառը՝ ընդունելու երկրաչարժից վնասված բնակիչների համար չինվված տները։

—

Մենք հաղորդել էինք, որ ռուսական արդիւնագործութեան եւ առեւտրին նպաստող Ընկերութիւնը մի մասնաժողով էր կազմել՝ բանուորներին ապահովագրելու հարցը մշակելու համար։ Մասնաժողովի պարապմունքներին պէտք է մասնակցէին ներկայացուցիչներ զանազան մինիստրութիւնների կողմից։ Այժմ մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ այդ մասնաժողովի պարապմունքները, որոնք պէտք է սկսվէին սեպտեմբերի 18-ին, յետաձգված են անորոշ ժամանակով։

—

ԲԱՂԱՆԻՍ գիւղից (Ղազախի գաւառ) մեզ գրում են. «Թիֆլիսեցի մի աղքատ կին, իմանալով որ մեր գաւառի գիւղերում ցորենի առատութիւն է, շորեր է հաւաքում ու դէպի Բարանա գիւղ ուղեւորվում։ Մինչեւ Սադախլու կայարան երկաթուղիով է գալիս, իսկ այդտեղից մի թուրքի ձի է վարձում մինչեւ վերոյիշեալ գիւղը։ բայց երբ Ղուրու-Զային է հասնում, եօթը զինված մարդիկ են դուրս գալիս եւ կողոպտելուց յետոյ՝ կնոջն էլ իրանց հետ անտառն են տանում եւ երեք օր պահելուց յետոյ գիւղն են ուղարկում։ Խեղճ կինը գիւղ հասնելուն պէս հոգին աւանդում է։ Նոյն Բարանա գիւղում մի քանի «ականաւոր» մարդկանց ցորենի եւ գարու դէզեր են կրակել։ Զարագործները գնդակից ազատված չարչարանքները թեթեւ են համարում, ուստի այսպիսի միջոցների են դիմում։»

—

ԱՍՏԱՐԱՅԻՑ մեզ գրում են. «Սեպտեմբերի 17-ին պարսից Շահը հասաւ այստեղ եւ իջաւ Արգուլբաղը Շուքուրօվի տանը։ Մեծ ուրախութիւն էր այստեղ, որ այս փոքր քաղաքը՝ Աստարան՝ չէր էլ կարող երազել։ Մի կողմից նուագումը, որը ամեն առաւօտ եւ երեկոյ տեղի էր ունենում, թնդանօթաձգութիւնը, ճանապարհների անցուդարձը եւ փողոցների զարդարված կամարները՝ այս ամենը միասին մեծ ուրախութիւն էր։ Երկու օր մնալուց յետոյ նորին մեծութիւնը Քարբարայի ճանապարհով մեկնեց Էնզէլի։»

—

ՄՈՎՍԷՍ գիւղից (Ղազախի գաւառ) մեզ գրում են. «Այս օրերս մի գաւառի դէպք պատահեց այստեղ։ Մի երիտասարդ, սիրահարված լինելով մի օրիորդի հետ, յայտնում է այդ մասին իր ծնողներին, բայց վերջիններից մերժումն է ստանում։ Քանի օր բաղակայելուց, երիտասարդը իր ընկերակիցներից մէկին ասում է, որ չուտով պիտի մեռնեմ, բայց իմ դագաղս մինչեւ գերեզմանոց դուք կը տանէք։ Կարճ ժամանակից յետոյ հովիւները գտնում են խեղճի մարմինը սրտից գնդակահար եղած։»

—

ԲԱՂԱՆԻՍ գիւղից (Ղազախի գաւառ) մեզ գրում են. «Այս տարի մեր անտառները առատ են վայրի պտուղներով՝ տանձով, խնձորով, շլորով, տխիլով։ Գիւղացիները սայլերով, բեռներով անդադար կրում են. երբեմն այնքան շատ են բեռնում սայլերը, որ անիւները (ակները) փուլ են գալիս։ Անտառ, ամեն տեսակ պտուղներ, մարդ, տաւար, ոչխար իրար խառնված, ծառերի տակ թռչկոտում են երեխաները պտուղներ հաւաքելով։ Գիւղացիների այս խաղաղ կեանքը վրդովում են գողերը՝ խեղճերի լուծը գետնին թողնելով. մի կաչվի համար 40 ռուբլիանոց եզը, 50 ռուբլիանոց գոմէշը մորթում են ու անպատիժ մնում։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Զօլայի թողած կարողութիւնը, նրա բարեկամների հաշուով, հասնում է 4—5 միլիոն ֆրանկի, որ նա կտակել է իր կնոջը եւ երկու որդեգիրներին։ Զօլա, ինչպէս յայտնի է, կազմել է այդ ահագին կարողութիւնը բացառապէս գրական աշխատանքով։ Ֆրանսիայում Զօլա ստանում էր մի ֆրանկ իր գրուածների ամեն մի հատորից, իսկ նրա գրուածքներից շատերը ծախվում էին աւելի քան 100,000 օրինակ։

—Որովհետեւ մօտենում է անգլիական պարլամէնտի նստաշրջանի բացումը, որ գլխաւորապէս պէտք է նուիրված լինի ուսումնարանական օրինագծին, լրագիրները եռանդով զբաղվում են այդ օրինագծով։ Նրանք բոլորն էլ համաձայն են, որ կառավարութեան համար շատ դժուար կը լինի պաշտպանել օրինագիծը պարլամէնտում եւ ընդունել տալ նրան։ Մինչեւ անգամ կառավարչական մամուլը բաւական յոռետես կարծիք է յայտնում այդ մասին։ Ինչ վերաբերում է դիմադրական կուսակցութեան մամուլին՝ նա ամենայն եռանդով ագիտացիա է անում ուսումնարանական օրինագծի դէմ եւ գտնում է, որ կառավարութեան դիրքը այս հարցում չափազանց անկայուն է։

—Գեներալ Միլլէր, որ կռուում էր բօէրների շարքերում անգլո-տրանսվաալեան վերջին պատերազմի ժամանակ, հաշուել է, հիմնվելով Օրանժեան եւ Տրանսվաալեան նախկին հանրապետութիւնների զանազան շրջաններից ստացված տեղեկութիւնների վրա, որ բօէրների կըրած ընդհանուր վնասը տների եւ ագարակների աւերումից, անասունների ոչնչանալուց եւ այլ կորուստներից, հասնում է աւելի քան 60 միլիոն ֆունտ ստերլինգի (մօտ 600 միլիոն ռուբլի) եւ որ անգլիական կառավարութեան տուած նպաստը բօէրներին համեմատաբար մի չնչին գումար է։

—«Figaro» լրագրին հաղորդում են Բերլինից, թէ բօէրական գեներալներին Վիլհէլմ կայսրի կողմից ընդունելու հարցը դեռ եւս վերջնականապէս չէ վճռված։ Մինչեւ այժմ Բերլինի արքունիքը ոչինչ չէ պատասխանել բօէրական գեներալների խնդրի ընդունելութեան մասին։ Նրանց Բերլին հասնելու օրն եւս դեռ որոշված չէ. նա կախված է կայսրի պատասխանից։ Անգլիական լրագիրները, առանձնապէս «Times», դժգոհութիւն են յայտնում այն բանի դէմ, որ Վիլհէլմ կայսրը չէ մերժում դեներալների խնդիրը։ Այս առիթով Բերլինի լրագիրները նկատում են, որ անգլիական լրագիրները չը պէտք է համարձակվեն դասեր տալու գերմանական կայսրին, որը, եթէ ընդունէ բօէրական գեներալներին, կընդունէ ոչ որպէս անգլիական հպատակների, այլ որպէս քաջ զինուորների։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԴՈՒՍԱՌ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

26 սեպտեմբերի

ՊԷԿԻՆ։ Մանջուրիան Լիաօ գետից դէպի հարաւ վերադարձված է Չինաստանին համաձայն պայմանագրի։

ՏՕՄՍԿ։ Այսօր բացվեց առաջին ուսուցչական ինստիտուտը Սիբիրում։ Հանդիսի ժամանակ ստացված են շնորհաւորութիւններ եւ Եւրոպական Ռուսաստանի եւ Սիբիրի դպրոցներից։

ՍՈՒՄԻ։ Ժամանեց Մեծ Իշխան Կոնստանտին Կոնստանտինովիչ եւ դիմաւորվեց տաճարում Խարկովի արքեպիսկոպոս սրբազան Ցիլվինսկի կողմից։

ՊԱՐԻԶ։ Լուրերին նայելով, մինիստր-նախագահը հեռագրեց այն տասներկու դէպարտամէնտների պրէֆէկտներին, ուր տեղի են ունենում ածխահանների գործադուլները, զինուորական միջոցներ ձեռք առնել։

ՎԻԵՆՆԱ։ «Neue Freie Presse» հաղորդում է, որ կառավարութիւնը մտադրութիւն ունի առաջարկել մի օրինագիծ ըէյխսրատին զօրքի այժմեան թիւը մեծացնելու մասին։

ՍՕՖԻԱ։ Մի լրագիր հրատարակեց Բիլեան վանքից ստացված տեղեկութիւնը, որ փոխգնդապետ Նիկոլով քարոզում է ապստամբութիւն ամբողջ մակեդոնա-բոլգարական սահմանաշերտի վրա, եւ որ Դժումայի մօտ տեղի ունեցան ընդհարումներ։ Ուրիշ աղբիւրներից այդ տեղեկութիւնը չէ հաստատվում։

ԼՕՆԴՕՆ։ Լրագիրները գոհունակութիւն են յայտնում բօէրական գեներալներին ունկնդրութիւն տալու հարցի լուծման առիթով։

ԼՕՆԴՕՆ։ Օքսֆորդի համալսարանը շնորհեց պրոֆէսսոր Մարտէնին քաղաքացիական իրաւունքի դոկտորի աստիճան։

27 սեպտեմբերի

ՍՕՖԻԱ։ Կոմս Իգնատիէվ ճանապարհ ընկաւ Ռուսաստան Բուչչուկի վայրից։ Կայարանում նրան ճանապարհ էին գցում Իշխանի ներկայացուցիչները, մինիստրները, քաղաքագլուխը, դուման, ուսանողները եւ ժողովրդի ամբոխը։

ԿԻԼ։ «Վլաստի» եւ «Գրօզնի» տօրպէդային նաւակները հասան սեպտեմբերի 26-ին։

ՖՐԱՆԿՖՈՒՐՏ ՄԱՅՆԻ ՎՐԱ։ «Frankfurter Zeitung» լրագրին հաղորդում են Կ. Պոլսից, որ, նորագոյն տեղեկութիւնների համեմատ, սուլթանը հրատարակեց իրադէ, որով հաստատեց մաքսային փոխադրութեան կոնվենցիայի պայմանները։ որ առաջարկել է օսմանեան բանկը. սակայն բանկը չէ ուսացել պաշտօնական հաղորդագրութիւն։

ԼՕՆԴՕՆ։ Կէսօրին դադարեցրվեց 50,000,000 ենի եռպօնական փոխառութեան ստորագրութիւնը։

ՎԼԱԴԻՎՕՍՏՕԿ։ Սեպտեմբերի 26-ին ֆինանսների մինիստրը այն գնացքով, որով ճանապարհ էր ընկել Մոսկվայից, ժամանեց Վլադիվոստոկ։ Նա տասն եւ հինգ օր ու գիշեր ճանապարհ էր գնում ընդմիջումներով, եւ նստում էր չինական արեւելեան երկաթուղու մասերը։ Ճանապարհների ներկայ դրութեան ժամանակ մարդատար գնացքը կարող է 12½ օր ու գիշերվայ ընթացքում կատարել այդ ճանապարհորդութիւնը, իսկ երբ աւարտվի շրջաբայկալեան եւ չինական արեւելեան ճանապարհների կառուցումը եւ սիբիրեան երկաթուղու րէլսերը շտացնվեն՝ այդ ճանապարհորդութիւնը կարելի կը լինի կատարել 10 օր ու գիշերվայ ընթացքում։

ՊՕԼՏԱՎԱ։ Կրէմէնչուգի զէմստվոյի ժողովը միաձայն որոշեց 24,000 ռ. տալ գաւառում արհեստագիտական արհեստանոց հիմնելու համար եւ տարեկան 8,000 ռ. այդ արհեստանոցի պահպանութեան համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ընդհանուր շտաբի գնդապետ Սեմանովի, սկսելով կազմել տարօրեան 38-րդ հետեւակ գնդի պատմութիւնը, խնդրում է այն անձանց, որոնք այդ գնդի անցեալ կեանքին վերաբերեալ որ եւ է դիտումներ ունեն, ուղարկեն հետեւեալ հասցէով. Մոսկվա, գրէնադէրեան առաջին դիվիզիայի շտաբը, իր անունով։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ԴԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հարդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Ա. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. փիրաբաժութեան, վներական (տիֆիլիս) և միզաքեռ. հիւանդ.

Կ. Ի. Գզելիով—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.

Զ. Ի. Թարանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.

Գ. Ա. Թարխանեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ. երկուշ. չորեք. ուրբաթ։

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ա. Պ. Հարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ. երեքշ. հինգշ. շաբաթ։

Գ. Ա. Թարխանեանց—7—8 ժ.

Ա. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.

Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախարհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Ս. Սաւվանիտակի—տանը. ծաղկաձաւ և բուժչական մարմնամարզ. դիմել 11-1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ԲՈՒԺԱՍԵՆԵԱԿ

ԴՕԿՏՕՐ Վ. ԱՐԾՐՈՒՆՈՒ

Նորագոյն ապարատներով եւ էլեկտրական մեքենաներով. մասնաւորապէս

ԲԳԻ, ՔԹԻ, ԱԿԱՆՋԻ ԵՒ ԿՐԾՐԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Сергіевская ул., д. 12.

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Սրանով պատիւ ունեմ յայտնելու պ.պ. վաճառականներին, որ առաջիկայ աշնանային սեզօնից ընդունում ենք Բագվում վաճառելու, գնելու եւ տեղափոխելու ամեն տեսակ ապրանքներ թէ Պարսկաստանից, թէ Կովկասից եւ թէ Անդրկասպեան կողմերից։

1903 թ-ին բացվելու է բաժանմունք Աստրախանում։ Ցանձնարարութիւնները կը կատարվեն ճշդութեամբ եւ շուտ։

Պետրոս Եսայեան եւ եղբայրներ

Մեր հասցէն՝ Баку, Бр. Есаянцъ.

4—8

ԲԱԳՈՒ

ՈՒՍԱՒՈՐՆԱՐԱՆ Հ. ԻՍԱՀԱԿԵԱՆԻ

Աշակերտների ընդունելութիւնը օգոստոսի 31-ից, իսկ դասաւանդութիւնը սեպտեմբերի 9-ից։

Դպրոցական ծրագրի հետ միասին աշակերտները անցնում են պահանջվելիք առարկաները գիմնազիա, ռէալական եւ վաճառականական դպրոցները մտնելու համար։

(Ցիցիանովսկայա եւ Կարանտինայա փողոցների անկիւնում)։

7—10

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Շուշի քաղաքի Ագուլեաց եկեղեցու համար, ինչպէս յայտարարել եմ, հարկաւոր է

ՄԻ ՔԱՀԱՆԱՅԱՅՈՒ։

Ցանկացողները կարող են դիմել ինձ, ոչ ուշ, քան մինչեւ ներկայ սեպտեմբերի 25-ը, հետեւեալ հասցէով. Шуша, ктитору Хачатуру Хачатурянцу.

6—6

Հարկաւոր է

Ղուբայի հայոց ս. Աստուածածին եկեղեցու համար մի

ՏԻՐԱՑՈՒ,

որ ունենայ աշող ձայն, լաւ գիտենայ հայկական ձայնագրութիւն եւ շարականների հին եղանակները, կարողանայ եւ խումբ պատրաստել մի եւ երկձայն պատարագին երգելու համար։ Դպրոցում պիտի աւանդէ շաբաթական երեք դաս երգեցողութիւն։ Պէտք է կատարէ նաեւ եկեղեցական ամենօրեայ ամենատեսակ սպասաւորութիւնը, եկեղեցու մաքրութիւնը, ժամկոչի պաշտօնը։ Ռոճիկ ամսական 10—12 բուբլի, բացի ժողովրդից ստանալի արդիւնքներից։ Ցանկացողները թող դիմեն Ղուբա, Ктитору армянской церкви Аваку Теръ-Егіазарову.

Երէցփոխ՝ Աւագ Տէր-Եղիազարեանց

4—5

ՄԻ ՀԻՆ ԴՊՐՈՑԱՒԱՐՏ

երիտասարդ փնտրում է պաշտօն՝ գանձապահի, կառավարչի կամ վերակացութեան։ Ունի ընտիր բեկոմենդացիաներ։

Հասցէն՝ Հաւլաբար, Իօրկայեա փող. № 1.

6—6

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

ԽԵՂՃԵՐԸ

պատմուածքների ժողովածուն, մօտ 400 երես, ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է ԵՒ ՇՈՒՏՈՎ ԼՈՑՍ ԿԸ ՏԵՍՆԷ։

Գինն է 1 բուբլի

Ճանապարհածախսով 1 ր. 20 կոպէկ։

Ցանկացողները այժմեանից կարող են դիմել «Մուրճի» խմբագրատուն՝ հեղինակին. Тифлисъ, редакція „Мурчъ“.

1—10

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ ՀԱՆՐԻ ԲՕՐԴՕՑԻ

ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ

վէպը, թարգմ. Հ. Առաքելեանի։ Գինն է 60 կ. (Ճանապարհածախսով 75 կ.)

—

Մամուլի տակ է եւ շուտով յոյս կը տեսնի

ԶՀՈՒԴ-ՔՈՒՇԱՆ

(Հրէասպանութիւն)

վէպ Պարսկաստանի կեանքից ՇԱՀԲԻՒԱՐԻ

Գինն է 50 կ. (Ճանապարհածախսով 60 կ.)

Երկուսի համար եւս դիմել՝ Հ. Առաքելեանին, Թիֆլիս, խմբագրութիւն «Մուրճ» ամսագրի, կամ «Գուտենբերգ» գրավաճառանոց։

1—10

ԹԻՖԼԻՍԻ ԱԶՆԻԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ

Տելէֆոն № 617

Այսօր, շաբաթ, սեպտեմբերի 28-ին, Խարկովի ռուսաց օպերային արտիստները կը ներկայացնեն

ԱԻԴԱ

օպերա 4 գործ. եւ 7 պատկերով, երաժշտութիւն Վերդիի

Մասնակցում են—տ. տ. Զօրինա, Կարամզինա-Ժուկովսկայա, պ.պ. Վասիլիեվ, Պոլուեանով, Իզմայլով, Պետրով, Պէվցով եւ այլն։ Բալետը դրել է բալետմէյստեր պ. Մենարբէնի։ Զինուորական օրկէստր 1-ին կովկասեան ապերների բատալիոնի, պ. Ռիչչարի կառավարութեամբ։ Դեկորացիաները նկարիչ պ. Սուվորովի։ Հանդերձները եւ ակսեսուարները սեփական արհեստանոցից։ Կապէլմէյստէր Լ. Պ. Շտէյնբէրգ։ Խմբապետ Ա. Գ. Զվերժանսկի։ Կարգադրիչ Մ. Դուրանդին։ Սկիզբը երեկոյեան ժամի 8-ին։

Վաղը, կիրակի, 29-ին սեպտեմբերի, ներկայացում չի լինի։ Երկուշաբթի, սեպտեմբերի 30-ին, երրորդ հանրամատչելի ներկայացում նշանաւոր չափով պակասացրած գներով. կը ներկայացնեն ԴԷՄՕՆ։ Երեքշաբթի, հոկտեմբերի 1-ին, կը ներկայացնեն ԼԱԿՄԷ։ Տոմսակները ծախվում են բոլոր ներկայացումների համար։

Կասսան բաց է ամեն օր, առաւօտեան ժամի 10-ից մինչեւ 3-ը եւ երեկոյեան 6-ից մինչեւ ներկայացման վերջը։

Դեղարուեստական մասի կառավարիչ Ի. Փիթոեվ։

1—1

ՄԻ ՆՈՐԵԿ, որ գիտէ տեղական եւ եւրոպական լեզուներ եւ հաշուապահութիւն, որոնում է պաշտօն։ Դառայել է Société Metallurgique de Taganrog» ընկերութեան գրասենեակում եւ ունի վկայական։ Դիմել՝ Сергіевская улица, д. № 1, кварт. № 14, А. З.

1—1

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Պատիւ ունենք հաղորդել պ.պ. վաճառականներին, որ բացի մեր սեփական առեւտրական գործերից, ընդունում ենք յանձնարարութեամբ եւ կոմիսիոներական գործեր.—ապրանքները տեղափոխել Շուշուց Նէլախ, Ռուսաստան կամ Պարսկաստան։ Պայմանների մասին կարելի է իմանալ նամակով։ Հասցէն՝ Евлахъ կամ Шуша, Комиссіонерная контора Бр. Курбановы и Латифъ Гаджіевъ.

1—6

ՄԻ երիտասարդ կամենում է դասեր ունենալ հայերէն լեզուով։ Հասցէն. Крузенштернская ул., домъ Алдаданова, № 7.

1—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱԳԼԽԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՏԱՐԸ

յայտնում է ի գիտութիւն ընտրողների, որ Թիֆլիսի քաղաքային դումայի ձայնաւորների ընտրութիւնը, ընտրողական երրորդ շրջանում, նշանակված է 1902 թ. սեպտեմբերի 29-ին, Թիֆլիսի ժողովարանի ամառնային բնակարանում, Միքայէլեան փողոցի վրա։ Ընտրողական ժողովի մուտքի տոմսակները տրվում են ուպրավայի դիւանատունը մինչեւ սեպտեմբերի 28-ը, ներփակված. իսկ ընտրութեան օրը կը տրվեն հէնց Թիֆլիսի ժողովարանի բնակարանում, առաւօտեան 10 ժամից մինչեւ քուէները համրելը սկսելը։

2—3

ԼԱՒ ՁԵՌԱԳԻՐ

ունեցող երիտասարդ ընդունում է արտագրութիւններ հայերէն ու ռուսերէն լեզուներով։ Հասցէն Довостребованія С. К. П.

2—3

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է 1902 Թ.

„ՄՈՒՐՃ“

ԱՄՍԱԳՐԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ համար տարեկան բաժանորդագինն է 10 ր., ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ համար 12 ր.
կէս տարվան » 6 ր., » » 7 ր.

Հասցէն.—Тифлисъ, въ редакцію „Мурчъ“. Tiflis, Rédaction de la revue «Mourtch».

ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ կարելի է գրվել եւ «Գուտենբերգ» գրավաճառանոցում։

ԲԱԳՈՒՄ՝ պ. Ե. Մուսինեանի մօտ, Գրամնօվոդսկայա եւ Մալականսկայա փողոցների անկիւն, տուն Մուսա-Նաղիեվի, Контора Генеральнаго Общества.

ԲԱԼԱԽԱՆՈՒՄ՝ պ. Մ. Տէր-Դանիէլեանի մօտ, «Անդրանիկ» ընկ. գործարանում։

2—5

Թիֆլիսի Նաւթարդիւնաբերական Ընկերութեան Վարչութիւնը

Սրանով յայտարարում է ի գիտութիւն պ.պ. բաժնետէրերի, որ նեռկայ Թւի սեպտեմբերի 25-ին նշանակված չը կայացած ընդհանուր ժողովի փոխարէն, նշանակվում է

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Շաբաթ, սեպտեմբերի 28-ին, երեկոյեան ժամը 8-ին, Վարչութեան գրասենեակում, որը ընկերութեան պայմանագրի 29-րդ յօդուածի համաձայն կը համարվի կայացած, ի նկատի չառնելով ձայների քանակութիւնը։

1—1

ԶԸ ՏԵՍՆՎԱԾ ԷԺԱՆ ՎԱՃԱՌՈՒՄՆ

ՄԻՄԻԱՑՆ 10 ՕՐՈՎ

Սեպտեմբերի 20-ից մինչեւ Հոկտեմբերի 1-ը

ԵՂԲ. ԽՈՒԴՈՎԵՐԻԱՆՆԵՐԻ

խանութում նշանակված է

Անցեալ տարիների սովորութեան համեմատ՝ այս տարի եւս

ԶԸ ՏԵՍՆՎԱԾ ԷԺԱՆ ՎԱՃԱՌՈՒՄՆ

Սեզօնից մնացած՝ տղամարդկանց բոլոր ձմեռվայ հագուստների, որոնք առանձնացրած եւ վերջնական գներն նշանակված են էտիկէտների վրա կապոյտ մատիտով

Ստացված են նոյնպէս

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ տղամարդկանց, կանանց եւ երեխաների ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ, պատրաստված ամենավերջին տարազով

Ընդունում ենք նաեւ

Մեր սեփական կտորներից ԱՄԵՆԱՑՆ ՏԵՍԱԿ ՊԱՏՈՒԷՐՆԵՐ, թէ եւրոպական եւ թէ ֆորմէնից—աշակերտական, ստացված արտասահմանեան եւ ռուսական ամենայայտնի գործարաններից։

ԳՆԵՐԻ ԷԺԱՆՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՉ ՈՔ ՉԷ ԿԱՐՈՂ ՄՐՑԵԼ

8—10

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԼԱԲՕՐԱՏՕՐԻԱ

Գ. ՓԱՍՏՐՄԱՃԵԱՆԻ

ԴՕԿՏՕՐ ՔԻՄԻԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Քիմիական անալիզներ (որակական եւ քանակական) ամեն տեսակ նիւթերի՝ հանքեր, հանքային ջրեր, գիւղատնտեսական նիւթեր եւ այլն եւ այլն։

Տեխնիկական փորձեր եւ խորհուրդներ։

Դիմել՝ Тифлисъ, Кавказская Центральная Лабораторія Доктора химіи Г. Пастермаджіянъ, Вельяминовская ул., д. Лорисъ-Меликова, № 19.

8—26

ОБЪЯВЛЕНІЕ

Управленіе Закавказскихъ желѣзныхъ дорогъ проситъ лицъ, уплачивающихъ агентамъ дорогъ какіе либо дополнительные сборы, обязательно требовать отъ агентовъ, взыскивающихъ сборы, выдачи установленныхъ квитанцій, въ удостовѣреніе уплаты денегъ, такъ какъ неполученіе такихъ квитанцій можетъ повлечь къ недоразумѣніямъ и требованію вторичной уплаты.

5—5

Ֆինանսների Նախարարութեան իրաւասութեան տակ գտնվող

ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲԱՀԱՄԵԱՆԻ

Հեղինակ «Առեւտրական, գործարանական եւ նաւթարդիւնաբերութեան հաշուապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների Նախարարութեան ուսումնական բաժնի կողմից ընդունված է իբրեւ օժանդակ ձեռնարկ առեւտրական դպրոցներում

ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու տեսի անձանց՝ գործնական ձեւով հաշուապահութիւն 4 ամսում, պատասխանատուութեամբ, եւ հարկաւոր դէպքում՝ յանձնարարականով

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

1) Իտալական կրկնակի հաշուապահութիւն արդիւնագործութեան բոլոր ճիւղերի վերաբերեալ, նաեւ նաւթարդիւնաբերական եւ նաւթագործական հաշուապահութիւն։

2) առեւտրական թուաբանութիւն։

3) Առեւտրական թղթակցութիւն։

4) Մուրհակային եւ առեւտրական օրէնքներ։

5) Վայելչագրութիւն եւ ուղղումն ամենավատ ձեռագրի։

Ընդունելութիւն ամեն օր։ Պարապմունքները սկսվում են 1902 թ-ի Սեպտեմբերի 23-ից պարբերաբար ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ՝ 60 բուբլի վճարով ամբողջ դասընթացքի համար։

Դասընթացքը աւարտողներին տրվում է, Ֆինանսների Նախարարութեան թոյլատրված ծրագրի համաձայն, վկայագիր։

Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին՝ Թիֆլիսում, Николаевская ул. № 46, ամենայն օր։ Ծրագիր ուղարկվում է ձրի։

Վերեւում յիշված ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պոստի ծախս վճարելու։ Գինն է 3 ր. 50 կոպէկ։ (կ. ե. հ. չ.)

33—35

Дозволено Цензурою, Тифлисъ, 27 Сентября 1902 г.

Электропечатная Груз. Изнат. Т—ва. Б.-Вакская ул.